

Մ 11
190

18.00.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻՆԱ ԱՐԴԱՇԵՍԻ ԹԱՐՎԻՐԴՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության
թեկնածուի զինական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА

ТАРВИРДЯН АЛИНА АРДАШЕСОВНА

ОЦЕНКА И ВОЗМОЖНОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ АРХИТЕКТУРНОГО
НАСЛЕДИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ ТЕГЕРАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата архитектуры по специальности
18.00.01 – “Архитектура”

ЕРЕВАН 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում


Գիտական ղեկավար՝ Ճարտ. դոկտոր Գ.Հ. Ռաշիդյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Ճարտ. դոկտոր Ա.Հ. Գրիգորյան
Ճարտ. թեկնածու Է.Ս. Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ
Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 6-ին, ժամը 15.00-ին Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի կից գործող «Ճարտարապետություն և շինարարություն» 030 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՃՇՊԶ-ի գիտական գրադարանում: Հասցեն՝ 0079, ք. Երևան, Մառի փ., 17/1:

Մեղմագրին կարելի է ծանոթանալ ԵՃՇՊԶ-ի պաշտոնական կայքում՝ www.yasuac.am

Մեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 6 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, Ճարտ. թեկնածու՝  S.U. Բաբսեդյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства


Научный руководитель՝ доктор архит. Г.Г. Рашидян
Официальные оппоненты՝ доктор архит. А.А. Григорян
канд. архит. Э.М. Саркисян
Ведущая организация՝ ЗАО "Ереванпроект"

Защита состоится 6 -го июня 2013г. в 15.00 часов на заседании Специализированного совета "Архитектура и строительство" 030 ВАК РА при Ереванском государственном университете архитектуры и строительства по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке ЕГУАС по адресу: 0079, г. Ереван, ул. Марра, 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте ЕГУАС: www.yasuac.am

Автореферат разослан 6 -го мая 2013 г.

Ученый секретарь Специализированного совета, кандидат архитектуры՝  T.S. Բարսեցյան



11-190

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՊՈՒՆՈՒՄ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ ճարտարապետության կարևորագույն խնդիրներից է փյոյրոքի հայ ճարտարապետական ժառանգության գնահատման, օգտագործման և զարգացման ուղիների հետազոտումը:

Հայկական գաղթավայրերի ազգապատկան շատ շենքեր՝ դպրոցներ, նախակրթարաններ և հատկապես հոգևոր կառույցներ, կարծես թե մատնվում են մոռացության: Վերջին տասնամյակների ընթացքում արտագաղթի պատճառով նվազել է իրանահայ համայնքի թվաքանակը, և ազգապատկան շենքերի մի մասը հայտնվել է անօգտագործելի վիճակում:

Իրանի հայաշատ քաղաքների, մասնավորապես Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման հիմնախնդիրը վերջին տասնամյակների ընթացքում միջազգային և ներազգային կյանքի խոշոր փոփոխություններին զուգընթաց դարձել է առավել նշանակալի և անհնապաղ լուծում պահանջող:

Թեհրանի հայ համայնքն այնքան հին պատմական անցյալ չունի, որքան Թավրիզին ու Նոր Ջուղայինը, քանի որ Թեհրանը որպես Իրանի 32-րդ մայրաքաղաք ունի ընդամենը 250 տարվա պատմություն: Այս կարճ ժամանակահատվածում թեհրանահայությունը հասել է զարգացման բարձր մակարդակի, և այսօր մեզ ժառանգություն են մնացել 18-րդ դարից ի վեր կառուցված բազմաթիվ ազգապատկան հոգևոր, մշակութային, մարզական և հասարակական շենքեր, որոնք ունեն տարբեր՝ պատմական, ճարտարապետական, քաղաքաշինական, մոնումենտալ, կյութական արժեքներ: Այս թեման իր բոլոր նրբերանգներով այսօր համայնքային գերխնդիրներից մեկն է և ենթակա լուրջ, մանրագին ուսումնասիրության: Ազգապատկան դպրոցական շենքերն աշակերտության թվաքանակի կրճատման պատճառով հանվում են շահագործումից: Կրճատման են ենթարկվում նաև այլ հասարակական և սպասարկման գործառույթների շահագործման շրջանակներ: Հոգևոր կառույցների պարագայում խնդիրն ավելի հստակ է դրված: Իրանահայ համայնքի ազգային իշխանությունները հարցը ցարդ քննարկում են կարճաժամկետ ծրագրերով՝ ելնելով զուտ ժամանակի նեղ, առօրեական պահանջներից՝ հիմնականում նկատի առնելով հարցի ֆինանսական կողմը: Անշուշտ գորալիզացման գործընթացին բնորոշ արագընթաց փոփոխությունները հաճախ անակնկալի են բերում, սակայն ակներև է, որ հապճեպ կայացված որոշումը մասնագիտական լուծում չէ, այլ տվյալ իրավիճակի, պահի թելադրանքով արված քայլ: Աման մտնեցումը կարող է հանգեցնել անվերադարձ կորուստների, քանի որ ճարտարապետական ժառանգությունը համալիր երևույթ է:

Յուրաքանչյուր գաղթավայրի ազգային ժառանգությունը համայնքի զարգացման պատմության կյութականացված պատկերն է: Այն կրում է համայնքի և տվյալ միջավայրի ընդհանուր զարգացման փոխազդեցությունների կնիքը: Նախնական գնումները ցույց են տվել, որ անհրաժեշտ է բազմակողմանի և մանրագին ուսումնասիրությունների ու հաշվարկումների հիման վրա որոշել, թե առկա ժառանգության շենքերից որոնք կարելի է նույնությամբ պահպանել, վերականգնել, վերանորոգել կամ փոփոխելով գործառնությունը՝

վերանախագծել-վերակառուցել, իսկ առանձին ծայրահեղ դեպքերում՝ ամբողջովին քանդել կամ վաճառել: Ժամանակի հրամայականն է գույքագրել, գնահատել, արժեքավորել, ընդհանրապես Իրանի, իսկ տվյալ պարագայում՝ Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգությանը պատկանող բոլոր շենքերն ու կառույցները:

Հետազոտման առարկան Թեհրանում ձևավորված հայ համայնքի ճարտարապետական ժառանգության գնահատման և օգտագործման ու զարգացման հնարավորությունների որոնումն է:

Ուսումնասիրության սահմանները: Ուսումնասիրության ժամանակային սահմաններն ընդգրկում են 18-րդ դարի վերջերից մինչև մեր օրերը:

Տարածքային առումով աշխատությունում ընդգրկված է միայն բուն Թեհրանի սահմաններում մինչ օրս պահպանված ազգապատկան ճարտարապետական ժառանգությունը:

Ուսումնասիրության նպատակն է Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգության առկա վիճակի ուսումնասիրության հիման վրա տալ ազգապատկան կառույցների, կալվածքների նպատակահարմար, բարենպաստ օգտագործման հանձնարարականներ ու առաջարկներ:

Ուսումնասիրության խնդիրները: Առաջադրված նպատակից ելնելով՝ աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները.

- գույքագրել Թեհրանի հայ համայնքի ձևավորման և զարգացման ընթացքում ստեղծված ազգապատկան շինություններն ու կալվածքները.
- ուսումնասիրել և գնահատել ճարտարապետական ժառանգության կառույցները և դասակարգել ըստ պատմական նշանակության, տեխնոլոգիական բնույթի, պահպանվածության աստիճանի, քաղաքաշինական միջավայրում ունեցած տեղի ու դերի.
- կազմել շինությունների ներկա վիճակի արժեքավորման աղյուսակներ.
- մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ ու առաջարկներ՝ շինությունների լավագույն և նպատակահարմար օգտագործման, բարեփոխման, վերակառուցման կամ վաճառքի նպատակով:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնված է հետևյալ դրույթների վրա.

- Թեհրանի հայ համայնքի կազմավորման պատմական անցյալին վերաբերող պարսկական և հայկական մատենագրական աղբյուրների ուսումնասիրություն.
- Թեհրանի քաղաքապետարանի արխիվային փաստաթղթերի, գրական աղբյուրների, նախագծային փաթեթների և լուսանկարչական նյութերի վերլուծական հետազոտում.
- Թեհրանի ազգային առաջնորդարանի արխիվային և նախագծային փաթեթների ուսումնասիրում.
- տեղում կատարված չափագրություններ, տեսողական դիտարկումներ.
- ճարտարապետական ժառանգության վերանորոգման ու վերականգնման բնագավառում իրանական և միջազգային դրական փորձի ուսումնասիրություն.

- Թեհրանի պատմությունն ուսումնասիրող մասնագետների հետ տվյալ թեմայի որոշակի տեսակետների քննարկում.
- իրանահայ համայնքի հասարակական արդի պահանջների քննարկում.
- վիճակագրական տվյալների հիման վրա համեմատական աղյուսակների պատրաստում.
- շենքերի՝ ըստ գործառական նշանակության արժեքավորում և դասակարգում:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսությունում առաջին անգամ,

- բացահայտվել են Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգության կազմավորման ընթացքի հիմնական փուլերը քաղաքի պատմական հյուսվածքի զարգացման համատեքստում.
- հիմնավորվել է Իրանի, մասնավորապես, Թեհրանի հայ համայնքի ճարտարապետական ժառանգության արժեքավորման, օգտագործման և զարգացման ուղիների ուսումնասիրության անհրաժեշտությունը.
- կատարվել է Թեհրանի հայ համայնքի ազգապատկան շենքերի գույքագրում, համակողմանի ուսումնասիրություն, արժեքավորում և դասակարգում՝ ըստ ճարտարապետական, պատմական, ֆինանսական կարևորության և պահպանվածության աստիճանի.
- մշակվել են ազգապատկան ժառանգության պահպանման, լավագույն և նպատակահարմար օգտագործման տարբերակներ.
- ներկայացվել են ժառանգության զարգացման, արդիականացման միջոցառումների հայեցակարգային հանձնարարականներ ու առաջարկություններ.
- ուսումնասիրվել, քննարկվել և առաջին անգամ ներդրվել են գիտական շրջանառության մեջ Թեհրանի հայ համայնքին վերաբերող մի շարք փաստեր ու իրողություններ:

Ատենախոսության առարկան մինչ օրս վերոհիշյալ տեսանկյուններից չի քննարկվել, ուստի նյութի հետազոտման տվյալ մեթոդաբանության կիրառմամբ կատարված աշխատանքը Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգության նման համակողմանի ուսումնասիրման առաջին փորձն է:

Ուսումնասիրության գործնական կիրառությունը և արդյունքների ներդրումը:

Ատենախոսության հիմնական դրույթները 5 հոդվածով հրապարակված են 2010-12 ԵՃՇՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածուներում և Տեղեկագրում, որոնց ցանկը բերված է սեղմագրի վերջում:

Ուսումնասիրության սկզբունքները, մեթոդաբանությունն ու եզրակացությունները, ներկայացվող հանձնարարականներն ու առաջարկությունները կարող են ներդրվել որպես՝

- Թեհրանի հայոց թեմական խորհրդի համար ազգային նյութական ժառանգության պահպանման, օգտագործման և հետագա զարգացման գործընթացի մշակման հայեցակարգային ելակետ,
- Թեհրանի հայ համայնքի պատմությունն ուսումնասիրողների համար գիտական աղբյուր,
- Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգության նորոգման,

բարեփոխման և վերակառուցման աշխատանքներում ընդգրկվող ճարտարապետների և նախագծող մասնագետների համար հենակետային նյութ.

- Հ.Հ. Մփյուռքի նախարարության համար տեղեկատվական աղբյուր,
- Իրանի և սփյուռքի այլ հայաշատ քաղաքների ազգային ժառանգության պահպանման, օգտագործման և զարգացման ընթացակարգային դրույթների մշակման օրինակելի նախադեպ:

Մույն ուսումնասիրությունը պարսկերենով հրատարակելու պարագայում հնարավոր է, որ կիրառված սկզբունքներն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև եզրակացությունները հետաքրքրեն Թեհրանի քաղաքապետարանի համապատասխան բաժիններին:

Ներկայացվում է պաշտպանության՝

- Թեհրանի հայ համայնքի ճարտարապետական ժառանգության ձևավորման և զարգացման ընթացքը,
- համայնքի ճարտարապետական ժառանգության տիպաբանական բնութագիրն ու դասակարգումը՝ ըստ գույքագրման, չափագրությունների, արխիվային նյութերի և փաստագրական հենքի,
- ազգապատկան շենքերի ու տարածքների պահպանման, օգտագործման և հասարակության արդի պահանջները բավարարող բարեփոխման գիտականորեն հիմնավորված տեսական դրույթներ, գործնական հանձնարարականներ ու առաջարկներ:

Ուսումնասիրության պաշտպանության հավանությունը

Ուսումնասիրության հիմնական դրույթները քննարկվել են Թեհրանի Հայոց թեմական խորհրդում, զեկուցվել և քննարկվել են Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոնի նիստերում:

Հարցի ուսումնասիրությունն ու գոյություն ունեցող գրականության քննական տեսության հիմնական աղբյուրները: Աշխատանքում օգտագործվել են Թեհրանի քաղաքապետարանի www.tehran.ir, Թեհրանի քաղաքային բարեփոխման և նորոգման կազմակերպության www.newsazi.org, Իրանի մշակութային ժառանգության պահպանության կազմակերպության www.miras.org, Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի www.tehranprelacy.com, Իրանի պատմական և էկոլոգիայի կենտրոնի www.iranchurches.ir և Իրանի քաղաքաշինական հարցերի ուսումնասիրության կենտրոնի www.bhrc.ac.ir, կայքէջերից, արխիվային փաստաթղթերից, նախագծային նյութերից և փաթեթներից: Հատկապես օգտագործվել են Թեհրանի հայ համայնքի ձևավորման պատմության ուսումնասիրության առնչությամբ հրապարակված մի շարք իրանահայ հեղինակների՝ Նազար Գորոյանցի, Հովիկ Մինասյանի, Լինա Մելքոնյանի, Ժանեթ Լազարյանի, Անդրանիկ Հովանի աշխատություններն ու Արփիար Պետրոսյանի քարտեզները: Խնդրո առարկա կառույցների ճարտարապետական լուծումներին ծանոթանալու նպատակով ուսումնասիրվել են Է. Տիգրանյանի, Վ. Հարությունյանի, Գ. Շախկյանի ու Ս. Հասարայանի գրական ժառանգությունը: Օգտագործվել են Ա. Գրիգորյանի Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի պահոցի,

ինչպես նաև քննարկվող բնագավառի վերաբերյալ համաշխարհային փորձը բովանդակող այլալեզու աշխատություններն ու հոդվածները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Առենախառույն ընդգրկում է ա) տեքստային մաս՝ բաղկացած ներածությունից, երեք գլխից, ընդհանուր եզրակացություններից, երրորդ գլխի աղյուսակներից, պայմանական նշաններից, օգտագործված գրականության ցանկից (104 անուն) 125 էջ ընդհանուր ծավալով, բ) հավելված գրաֆիկական – ցուցադրական մաս՝ ներառված գծագրերից, քարտեզներից, սխեմաներից և լուսանկարներից (28 էջ):

ԱՏԵՆԱԹՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՈՈՏ ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ բացահայտված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, գիտական և գործնական կիրառությունը:

Առաջին գլխում՝ «Թեհրանի հայ համայնքի կազմավորման և ճարտարապետական ժառանգության զարգացման պատմության համառոտ ակնարկում», ներկայացված են 18-րդ դարից մինչ 20-րդ դարի վերջը հայ համայնքի կազմավորման և ճարտարապետական ժառանգության ձևավորման ու զարգացման պատմական ընթացքը և պատմականորեն ձևավորված **յոթ հայկական թաղամասերում** հայ ճարտարապետների կառուցած ազգապատկան ժառանգության արդի վիճակի փաստավորագրական բնութագիրն ու պահպանվածության տարաբնույթ մակարդակներ:

1. **«Դուլաբ»-ի հին թաղամասը,** որը գտնվում է թաղաքի հարավարևմտյան մասում, ձևավորվել էր Թեհրանի առաջին փոքրաթիվ հայ համայնքի կազմավորմանը զուգընթաց 1750-ական թվականներին: Ներկայումս պահպանված է միայն 4.5 հեկտար տարածքով Դուլաբի մարած գերեզմանատունը, որտեղ կա մոտավորապես 40.000 գերեզմանաքար: Գերեզմանատան աղյուսաշեն Ս.Հովհաննես մատուռը (95 քմ) կառուցվել է 1936թ., այնուհետև նորոգվել է 1980-ական թվերին և երեսպահվել քարով: Կաթողիկե համայնքին պատկանող գերեզմանատանը 1946թ. Անտուան Աբսեի միջոցներով կառուցվել է մի փոքրիկ մատուռ:

«Նոր բուրաստան»-ի գերեզմանատունում (22 հեկտար) կա մոտավորապես 20.000 գերեզմանաքար: 1974թ. գերեզմանատան հետ միաժամանակ, 80 սմ բարձր հարթակի վրա կառուցվել է խաչաձև հատակագծով և փոքրիկ լուսանցքներով ութանկյուն թմբուկով, կենտրոնագմբեթ Ս.Ստեփանոս մատուռը (100 քմ), որի զանգակատունը տեղադրված է արևմտյան մասում՝ մուսքի մոտ (Նկ.1):

2. **«Խարվազե Ղազվին» հին թաղամասում** 1808թ. օծվել է Թեհրանի առաջին հայ առաքելական Ս.Թադեոս և Բարթողիմեոս աղյուսաշեն էկեղեցին (220 քմ), որի ճարտարապետական ոճը ճշտված չէ, ունի արևելք-արևմուտք ձգվածությամբ ուղղանկյուն հատակագիծ, որը փողոցի հարթությունից ցածր է մոտավորապես 70 սմ: Եկեղեցին իր շրջակա տարածքով կազմում է ընդհանուր 400 քմ մակերես: Բակի հարավային հատվածում էկեղեցու երկու մուտքերից մի աստիճան ներքև իջնող աղոթասրահի արևելյան բեմի երկու թեմերում, գտնվում են ավանդատները: Տանիքը, որը դրսից հարթ է, ներսի կողմից չորս հիմնական կամարով հենված է աղոթասրահի պատերի և երկու սյան վրա, որի կենտրոնում է գտնվում

լուսանցքավոր թմբուկի փոքրիկ գմբեթը: Բակի տարբեր անկյուններում կան տապանաքարեր (Նկ.1)(Նկ.2):

Առաքելական Ս.Գևորգ աղոթատեղին կառուցվել է 1790-95թթ.: Այն 1885թ. վերափոխվել է եկեղեցու, որի ճարտարապետական ոճը ճշտված չէ: Ներքին մակերեսները գաջով երեսապատված, աղյուսաշեն եկեղեցու արևելք-արևմուտք ձգվածությամբ ուղղանկյուն հատակագծի կենտրոնում չորս սյուների վրա բարձրացած գմբեթի ութանկյուն թմբուկի ճակատներին տեղադրված են լուսանցքները: Եռահարկ զանգակատունը արևմտյան հատվածում անբավարար մակերեսի պատճառով կառուցվել է շենքի հարավային մասում: Եկեղեցին իր շրջակա տարծրով զբաղում է 679 քմ ընդհանուր մակերես: 1950թ. Թեհրանի Հայ կանանց եկեղեցասիրաց միության կողմից եկեղեցու բակի հետին մասում կառուցվել է ծերանոց:



ա. հարավային ճակատ

գ. լայնական կտրվածք

Նկ.1 – ա. «Գուլար», բ. «Դարվազե Ղազվին» թաղամասերը հին Թեհրանի քարտեզում, որտեղ կազմավորվել է առաջին փոքրաթիվ հայ համայնքը 18-րդ դարի կեսից:

Նկ.2 – Թեհրանի «Դարվազե Ղազվին» թաղում կառուցված առաջին հայ առաքելական Ս.Թադեոս և Բարթողիմեոս եկեղեցին, որը օծվել է 1808թ.

3. Թեհրանի պատմական հյուսվածքի կորիզը հանդիսացող «Հասանարազ» թաղամասը, ձևավորվել է 1930-ականներին, որտեղ գործում են նեոկլասիկ ոճով կառուցված և 1945թ. օծված Թեհրանի Առաքելական առաջին մայր տաճարը Ս.Աստվածածին կենտրոնագմբեթ եկեղեցին (1200 ք մ), որն ունի խաչաձև հատակագիծ, բազմանիստ ու լուսանցքավոր թմբուկ և թեք տանիք: Արևելյան պայտաձև խորանի ավագ բեմի երկու թևերում գտնվում են ավանդատները, իսկ արևմտյան ճակատներում երեք մուտքերի մեջտեղից, երկսյունանի գլխավոր կենտրոնական շքամուտքի թեք տանիքի վրա բարձրացել է գմբեթավոր զանգակատունը: Եկեղեցին կառուցվել է բակից 70 սմ բարձր հարթակի վրա և երեսապատվել խոշոր սրբատաշ տեղ-տեղ զարդաքանդակված Իսֆահան քարով: Եկեղեցին իր հարակից տարածքով կազմում է մոտավորապես 2560 քմ մակերես, որտեղ գտնվում են 1935-73 թթ. կառուցված ա) նախկին (1945-70թթ.) ազգային առաջնորդարանի իսկ ներկայումս ազգային երկու միությունների

կենտրոնատեղի հանդիսացող եռահարկ, աղյուսաշեն, պատային կառուցվածքով շենքը (460 ք մ), բ) աղյուսաշեն և երկհարկանի «Ակունք» կենտրոնը (365 ք մ), գ) աղյուսաշեն և քառահարկ «Վաչե Հովսեփյան» մշակութային համալիրը (3400 ք մ) և դ) Արտակ Մանուկյանի անվան ազգային թանգարանը:

1954թ. կառուցվել է Թեհրանի հայ կաթողիկե համայնքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (504 ք մ): Գմբեթը հենված է միացման հանգույցներից բարձրացող վեց կամարների վրա, որոնք միացած են արևելյան և արևմտյան պատերին հարող վեց սյան: 1979թ. արևմտյան մուտքի մոտ ավելացել է քարե սալիկներով երեսապատված և նոր ոճով կառուցված գմբեթադր զանգակատան աշտարակը: Եկեղեցու նկուղային հարկում է գտնվում «Աղաջանյան» անունը կրող դահլիճը (200 քմ), որի առաստաղը բարձր է բակի մակերեսից: Եկեղեցու շրջափակում են գտնվում Հայ կաթողիկե առաջնորդարանն ու պատրիարքական փոխանորդությունը:

Թաղամասի ուսումնական, հասարակական և մշակութային կառույցների շարքում ներկայացված են. ա) 1957թ. կառուցված «Քուշեշ Ղավթյան» դպրոցի (հիմն.1870թ.) աղյուսաշեն եռահարկ շենքը (3800 ք մ), որը 2007-08թթ. ուսումնական տարում դադարեց աշխատելուց և 2011թ. հանձնվեց Իրանում ՀՀ դեսպանությանը, բ) Հայ կաթողիկե համայնքի «Ալիշան» դպրոցի երկհարկանի շենքը, որը գործել է 1962-2009թթ. և ունի բարձր աստիճանի մաշվածություն, գ) 1276 քմ տարածքում, 1968թ. զնված «Հայ հասարակական ակումբ» (Հայ ակումբ)-ի խառը կառուցվածքով և քարե սալիկներով երեսապատված աղյուսաշեն նոր շենքը (950 քմ) իր նկուղային դահլիճով (750 ք մ), դ) 520 ք մ տարածքում, 1953թ. զնված «Արարատ» կազմակերպության կենտրոնատեղիի երկհարկանի, հարթ տանիքով, աղյուսաշեն, պատային կառուցվածքով շենքը (415 քմ) իր հեծանային ծածկով և թեք տանիքով կառուցված 450 մարդու տարողությամբ «Կոմիտաս»-ի անվան համերգային սրահով: Շենքն ընդհանուր մաշվածության պատճառով ժամանակ առ ժամանակ ենթարկվում է մասնակի վերանորոգման:

4. Ս.Սարգիս Առաքելական եկեղեցու թաղամասը կամ ըստ եկեղեցական բաժանումների «Օռլիս»-ը, ձևավորվել է 1970-ականներին: Եկեղեցին կառուցվել է 1970թ. Օժեն Ավթանդիլյանցի նախագծով: Երկհարկանի, թմբուկի և գմբեթի վրա ուղահայաց մեծ լուսանցքներով, արևելք-արևմուտք ձգվածությամբ, ուղղանկյուն հատակագծով (1700 ք մ), և ժամանակակից ոճով բակից քիչ բարձր հարթակի վրա կառուցված աղյուսաշեն, կենտրոնագմբեթ բազիլիկ եկեղեցին, որի ճակատները և ներսի հատակը ամբողջապես երեսապատված են սպիտակ մարմարով, Թեհրանի հայ առաքելական ամենամեծ եկեղեցին է: Եկեղեցի արևմտյան ճակատում ունի երեք մուտք, որոնցից մեջտեղի մուտքի երկու կողմերից վեր են խոյացել զանգակատների լուսանցքավոր գմբեթները: Արևելյան հատվածում պայտաձև խորանի ավագ բեմի երկու թևերում գտնվում են ավանդատները: Եկեղեցին հիմնովին նորոգվել է 2000 թվականին:

Եկեղեցու տարածքում, աղյուսաշեն, ձողային կառուցվածքով, ճակատներում սպիտակ տրավերտին քարով և ներքին մակերեսներում գաջով երեսապատված, միջանցքի երկկողմ կառուցապատումով և ծայրամասային սանդուղքներով,

Թեհրանի Հայոց Թեմական Խորհրդի ազգային առաջնորդարանի երկհարկանի նոր շենքը (1800 քմ), կառուցվել է 1972թ. Օժեն Ավթանդիլյանցի նախագծով:

Թեհրանի հայ Ավետարանական համայնքի Ս. Հովհաննես (հիմն. 1876թ.) 300 մարդու տարողությամբ աղյուսաշեն, պարզ սրահատիպ հատակագծային լուծումներով և ճակատները խոշոր քարերով երեսապատված եկեղեցու ներկայիս շենքը (165 քմ) կառուցվել է 1964թ. Գարեգին Նիկողոսյանի նախագծմամբ և հիմնովին նորոգվել է 1970թ.:

Ս. Սարգիս եկեղեցու ծխի տարածքում, 1952-71թթ. կառուցվել և գործում են ա) «Ռոստոմ» տղայոց (521.80 քմ), «Ռոստոմ» օրիորդաց (851.10 քմ), Արաքս (2129.90 քմ), Մարի Սանուկյան (2550 քմ), Նվարդ Գյուլբենցյան (2700 քմ), և «Գոհար Մեսրոպյան» (1850 քմ) դպրոցները: Բ) 1967թ. կառուցված Հայ ուսումնասիրաց «Չհարմահալ» միության երկհարկանի, ձողային կառուցվածքով և հարթ տանիքով շենքը (3270 քմ), որի երկրորդ հարկում է գտնվում 250 մարդու տարողությամբ, հեծանային ծածկով և թեք տանիքով Հովհաննես Թումանյանի անվան սրահը, 1971թ. կառուցված Հայ համալսարանականների ընդհանուր միության աղյուսաշեն, երկհարկանի խառը կառուցվածքով շենքը իր 150 մարդու տարողությամբ «Նիկո Աղբայան»-ի անվամբ նկուղային սրահով, և Մարի Սանուկյան դպրոցի առաջին հարկում (850 քմ) տեղավորված Հայ բարեգործական ընդհանուր միության կենտրոնատեղին:

5. «Ջեթոն» թաղամասը ինչպես նաև «Մարդարապատ» և «Մասուն» թաղամասերը ձևավորվեցին 1945-46թթ. Իրանի հայաբնակ տարբեր գյուղերից Թեհրանի Բեհջաբաթ թաղում հավաքված մեծաթիվ հայերի այն հատվածից, որոնց չէր հաջողվել ներգաղթել Հայաստան և դարձել էր անօթևան: 1953-54թթ. Իրանի պետական հասուկ կարգադրությամբ նրանք հաստատվեցին քաղաքի տարբեր հատվածներում («Մաջիդիե», «Հեշմաթիե», «Նարմաթ» և «Ջարբեշ» քաղաքամասեր):

«Ջեթոն» թաղամասում գործում են. ա) 1982թ. կառուցված աղյուսաշեն Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաքելական կենտրոնագմբեթ եկեղեցին (450 քմ), որի ճակատները և թմբուկը երեսապատված են սպիտակ տրավերտին քարով: Արևմտյան մասում տեղադրված է երեք մուտք: Գլխավոր մուտքից բարձրացող երկթեք տանիքի վրա գտնվում է զանգակատունը: Այս եկեղեցին աչքի է ընկնում գմբեթի բարձրությամբ (19.90 մ), որը Թեհրանի տարածքում գտնվող հայկական մյուս եկեղեցիների համեմատությամբ ավելի բարձր է և ճարտարապետական ճճի և գմբեթի ձևի առումով նմանվում է Էջմիածնի Ս. Հովհաննես եկեղեցուն: Եկեղեցին և իր տարածքը գրավում են 1834.5 քմ ընդհանուր մակերես: Թաղամասում գործում են (1956-95թթ.) կառուցված. Բ) «Արարատ» (1100 քմ) և «Շանթ» (631 քմ) դպրոցները, «Ահարոնյան» մանկապարտեզը (862.5 քմ), Գ) «Նաիրի» մարզամշակութային միության նոր կառուցվող երկաթբետոնե կառուցվածքով, երկհարկանի շենքը (540 քմ) իր բասկետբոլի խաղաղաշտով և 600 քմ նկուղային սրահով և Իրանի ազգային ու մշակութային միության (Ի.Ա.Ս.Ս) աղյուսաշեն, ձողային կառուցվածքով շենքը (150 քմ):

6.- «Մասուն» թաղամասում 1968թ. կառուցվեց ճակատներում կարմրագույն աղյուսով, իսկ ներքին մակերեսներում՝ գաջով երեսապատված Ս. Թարգմանչաց (778 քմ) եկեղեցին, որի հյուսիսային մասում հետագայում ավելացավ մեկ գմբեթ, մեկ սյունազարդ դահլիճ և զանգակատուն՝ արևմտյան մուտքի առջև, որից հետո արևելք-արևմուտք ձգվածությամբ բազիլիկ եկեղեցու հատակազիծը ձևափոխվեց խաչաձևի:

«Մասուն» թաղամասում գործում են (1962-2011 թթ.) կառուցված. ա) «Նաիրի» (1885 քմ), «Թունյան» (3272.70 քմ), «Հովհաննես Թովմասյան» (4100 քմ), «Արահամ Սողոմոնյան» (3331 քմ) դպրոցները և «Մասուն» մանկապարտեզը (2272.70 քմ), Բ)-Հայ մշակութային «Միփան» միության աղյուսաշեն, ձողային կոնստրուկտիվ լուծումներով կառուցված և ճակատները սալիկներով երեսապատված եռահարկ շենքը (1220 քմ), որտեղ ներառված են ծածկած մարգարահիք, գրադարանը, ժողովասենյակները, ընդունելության և միջոցառումների սրահները և գրասենյակը, Հայ մարզամշակութային «Ըաֆֆի» համալիրի (6000 քմ) ֆուտբոլի դաշտը, երեք հանդիսասրահից, բիլիարդի խաղասրահից, սրճարանից, համերգասրահից ու գրասենյակից բաղկացած աղյուսաշեն երկհարկանի շենքը և «Փերիո» կրթասիրաց միության շենքը (100 քմ): Գ) 2600 քմ. ընդհանուր մակերեսում կառուցված «Ավետիս Ավետիսյան» բուժարանի երկաթբետոնե կառուցվածքով, աղյուսաշեն և ճակատները քարե սալիկներով երեսապատված շենքը, որի տարբեր հարկերում տեղաբաշխվել են մասնագիտական բուժկենտրոնները, տարալուծարանները և դեղատունը:

7.-«Մարդարապատ» թաղամասի Սրբոց Վարդանանց Առաքելական եկեղեցին (345 քմ) կառուցվել է 1986թ.: Եկեղեցին ունի սովորական աղոթասրահի տեսք, որի արևելյան պայտաձև խորանի ավագ բեմի երկու թևերում գտնվում են ավանդատները: Զանգակատունը կառուցվել է սպիտակ և կարմիր տրավերտին սալիկով երեսապատված արևմտյան ճակատի մուտքից 9 մ բարձրության վրա: Թաղամասում գործում են (1958-2008 թթ.) կառուցված ա)- «Իսրայել Սահակյան» դպրոցը (1680 քմ) և Բ)-Հայ մարզամշակութային «Մարդարապատ» միության ձողային, մետաղե կոնստրուկցիայով, աղյուսաշեն եռահարկ նոր շենքը (620 քմ), որի ճակատները երեսապատված են քարե սալիկներով:

(1937-97թթ.) Թեհրանի տարբեր քաղաքամասերում կառուցվել են ազգապատկան այլ շենքեր, որոնցից ատենախոսության մեջ նշվել են «Արամ» սրահը (նախկինում «Շահ Աբաս» դպրոց), «Ա.Ի.Ք» հաստատության և տպարանի ձողային, երկաթբետոնե կոնստրուկցիայով եռահարկ, ճակատներում աղյուսով երեսապատված շենքը, «Մոսե մայրիկ» ծերանոց-խնամատան խառը կառուցվածքով եռահարկ շենքը, «Չիլոյան» ծերանոց-խնամատան ձողային, երկաթբետոնե կառուցվածքով, եռահարկ առաջին և երկրորդ մասնաշենքերը, որոնց ճակատները փողոցի կողմից երեսապատված են ցածրորակ գրանիտ քարով, իսկ բակի կողմից երեսապատման աղյուսով, «Տիրամայր-Նարեկ» մատուռը և Հայ ուսումնական «Մարիամ» հաստատության եռահարկ դպրոցը իր Ս. Հովսեփ փոքրիկ մատուռով:

Առաջին գլխում առանձին աղյուսակով ներկայացված է 1870 թվից մինչ օրս Թեհրանում կառուցված 48 ուսումնական հաստատության անվանացանկ,

որոնցից 27-ը տարբեր պատճառներով փակվել են տարիների ընթացքում: Յուրաքանչյուր թաղի ուսումնական հաստատության համար աղյուսակների տեսքով ներկայացված են շենքերի ճարտարապետաշինարարական տեխնիկական ցուցանիշների տվյալները:

- Երևան քաղաքի Կենտրոնական արտոնով, ուսումնասիրված ուսումնական 20 աղյուսաշեն շենքերի ցանկից 10-ը պատկանում են կողո պատերով, 7-ը երկաթբետոնե ձողային և 3-ը բետոնե ձողային կոնստրուկցիաների շարքին:

- Ճակատային մակերեսներում շենքերից 12-ը երեսապատվել են հիմնականում տրավերտին և տարբեր գույնի գրանիտ սալիկներով, իսկ մնացած 8-ը երեսապատման աղյուսներով: Ներքին մակերեսները երեսապատվել են գաջով, մարմար և գրանիտ քարերով:

- Շենքերը հիմնականում պատկանում են 2 և 3 հարկանի տիպային, իսկ հատկապես վերջին երկու տասնամյակներում կառուցվածները տիպային կրկնվող նախագծով շենքերին: Դրանցից մի քանիսն ունեն ձկուն հատակագծային լուծումներ: Հատակագծերի հորինվածքային լուծումների առումով շենքերից 7-ը ունեն միջանցիկ միջանցք սանդուղքները ծայրամասերում, 3-ը միջանցիկ միջանցք, սանդուղքը կենտրոնում, 4-ը միակողմ և 6-ը երկկողմ կառուցապատված միջանցքով ծայրամասային սանդուղքներով:


- Ակնարկվել է վերջին ժամանակներում լայն արձագանք գտած ազգային կառույցների լավարկման (օպտիմալացման) հարցը, որն արժարժվել էր ազգային իշխանությունների կողմից ազգապատկան շենքերի հատկապես դպրոցների «վերադասավորման» նպատակով:

- Առանձին վերնագրով ուսումնասիրվել են Թեհրանում հայերին պատկանող որոշ **հին բնակելի տների** ճարտարապետական, հատակագծային և ծավալատարածական լուծումները, որոնք ամբողջությամբ կրկնօրինակել են միջավայրի չափանիշները: Հատակագծում դրանք կառուցվել են ներքին բակի շուրջը համախմբված, ձողային կառուցվածքով, աղյուսաշեն մեկ կամ երկհարկանի, նեղ պատշգամբներով, ներսի մակերեսները գաջով երեսապատված, փայտե դռներով ու լուսամուտներով և հարթ կամ թեք թիթեղյա տանիքով շենքերում, որոնց նկուղային հարկերը հիմնականում օգտագործվել է խոհանոցային և պահեստային նկատառումներով: Տները բաղկացած են եղել փոքր ու մեծ սենյակներից, որտեղ բնակվել են տարբեր ընտանիքներ դասավորված նեղ միջանցքների երկայնքով կողք կողքի: Թեհրանում ազգաբնակչության տեղաշարժի պատճառով ժամանակի ընթացքում այդ տները մեծ մասամբ վաճառվել կամ վերածվել են արհեստանոցների: Հայաբնակ մի քանի բնակելի կանգուն շենքերի ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ դրանք անբաբտելիորեն կապված են Թեհրանի ընդհանուր քաղաքաշինության պատմության հետ:


Առաջին գլխի վերջում համառոտ ակնարկ է նվիրված **Թեհրանի մերձակա շրջանների գյուղերում** XVIII դ. երկրորդ կեսից բնակություն հաստատած հայերի անցյալին, որոնցից մինչ օրս գոյատևող Վանաքը (հիմն.1830թ.), համարվում է ամենամեծն ու հինը, որտեղ ներկայումս գործում են (1875-87թթ.) կառուցված. ա) աղյուսաշեն, ներսից գաջով երեսապատված, արևելք-արևմուտք ձգվածությամբ, ուղղանկյուն հատակագծով Ս. Մինաս բազիլիկ եկեղեցին (105 բմ), որի տանիքը

նախապես հենված է եղել չորս փայտե սյուների վրա: Աղոթարանից 70 սմ. բարձր Ավագ խորանի բեմի երկու կողմերում կա երկու փոքր ավանդատուն: Ունի հարավային և արևմտյան երկու մուտք, որոնցից վերջինին կից գտնվում է փոքր զանգակատունը, բ) Մայրաքաղաքի առաջնակարգ մարզահամալիրներից մեկը հանդիսացող «Արարատ» մարզավանը (52.000 բմ), որն ընդգրկում է ֆուտբոլային դաշտը, տարբեր ծածկած մարզադահլները, լողավազանները, հանդիսարանները, կանաչապատված տարածքները, ճաշարանները, ավտոկայանները և վարչական գրասենյակները (Նկ. 3): Տարածքի աղյուսաշեն շենքերն ունեն ձողային երկաթբետոնե կառուցվածք, որոնց ճակատները երեսապատված են երեսապատման աղյուսներով, գ) Խաչաձև հատակագծով, բետոնաշեն և ժամանակակից ճակատային դեկորատիվ լուծումներով կառուցված Ս.Խաչ մատուռը:

Ըստ առաջին գլխի եզրակացությունների, ուսումնասիրության արդյունքը ցույց է տվել, որ համայնքի ճարտարապետական զարգացման առաջատար միտումները արտահայտվել են հոգևոր շենքերում, որոնք ունեն 200 տարվա պատմական անցյալ սկսած 1800 թվից մինչև այսօր և մեծ մասամբ գրանցված են Իրանի մշակութային ժառանգության կազմակերպության ցանկում, գնահատվել են պատմական, տեղական, տարածքային, գործառական արժեքներով և նորգրվում են պարբերաբար: Սակայն զարգացման տարբեր փուլերում ժառանգությունը հարմարեցվել (ադապտացիա) է իրեն շրջապատող քաղաքի ընդհանուր ճարտարապետությանը և ստացել ուրույն ոճանմանակված (ստիլիզացված) կերպար և անցնելով նորացման, արդիականացման ու վերփոխման տարբեր փուլեր, հաճախ կրկնել է կառուցման ժամանակաշրջանում ընդունված օրինակները (Նկ. 4):



Նկ.3- «Արարատ» մարզավանի ա) հատակագիծ: Կառուցվել է 1978 թ.




Նկ.4 - Ս.Սարգիս եկեղեցու ա) հյուսիսային ճակատ բ) հատակագիծ: Կառուցվել է 1970 թ.:

Եզրակացության մեջ նշված է նաև, որ հոգևոր նշանակության շենքերում կան խառը մոտեցումներ: Առաքելական եկեղեցիները հիմնականում պատկանում են միանավ, սրահավոր դահլիճի տիպին: Դրանք, պահպանելով հայկական ճարտարապետական ու հատակագծային ընդունված հիմնական


լուծումները, կրել են միջավայրի արևելյան և իսլամական հոգևոր շենքերից որոշակի տարրեր, սակայն պահպանվել են գանգակատան, պայտաձև խորանի, Ավագ բեմի, ավանդատների, գլխավոր դահլիճի, կամարաշարերի և զմբեթի ձևը, որն արտացոլելով հայկական ճարտարապետությունը՝ կերտել է եկեղեցական կոնցլումերատի նոր կերպար: Արտաքին ճարտարապետական և ծավալատարածական արտահայտման ձևերը, կապված ֆինանսական հնարավորությունների, տարածության և այլ խնդիրների հետ, ընթացքում փոփոխվել, դարձել են ժամանակակից և ստացել նոր լուծումներ, իսկ ժամանակի առումով՝ նոր հնչյուններ, որը շատ դեպքերում չի կրկնել ընդունված նախնական ձևերի՝ հատկապես դեկորատիվ մասերը, և ձեռք է բերել նոր մեկնաբանություն:

Յոթ թաղամասերում և քաղաքի այլ վայրերում կառուցված շենքերը գտնվում են պահպանվածության տարբեր աստիճաններում, որոնց դասակարգումը 3-րդ գլխում կրացահայտի դրանց նկատմամբ կիրառվող վերաբերմունքի ձևը:

Նկար 5-ում Թեհրանի քարտեզի վրա տեղաբաշխվել է համայնքի ճարտարապետական ժառանգությունը, իսկ նկար 6-ում ցուցադրվել է ազգաբնակչության աճի զարգացման ընթացքը (1810-2012 թթ.):



Նկ.5- Թեհրանի հայ համայնքի ճարտարապետական ժառանգության տեղաբաշխումը քաղաքի գլխավոր հատակագծում



Նկ.6- Թեհրանի հայ ազգաբնակչության աճի զարգացումը (1810-2012 թթ.):

Երկրորդ գլխում հիմնականում ընդհանուր գծերով ներկայացված է «Ճարտարապետական ժառանգության պահպանման և վերաօգտագործման փորձը արտասահմանյան երկրներում», որը համեմատվել է Իրանի մասնավորապես Թեհրանի քաղաքաշինության պատմության ընթացքի հետ:

Հարցն ինքնին ընդգրկում է, ուստի և հավակնություն չունենք տալու գոյություն ունեցող միտումների սպառիչ մեկնություն: Խոսքը վերաբերում է ճարտարապետության մեջ հին և նոր շերտերի համագոյակցմանը: «Հնի» հասկացության մեջ մտնում են ավանդապաշտությունը, պահպանողականությունը, կարոտախոսը, ռոմանտիզմը և այլ երևույթներ, որոնք իրենց կնիքն են թողնում բնակիչների հուշերի վրա:

Քաղաքների վերակառուցման և հին շենքերի վերաօգտագործման առումով Եվրոպայում հարցին լուրջ մոտեցում է ցուցաբերվել և ծավալվել է զգալի մեծ աշխատանք: 1975-76թթ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված ճարտարապետական ժառանգության ամբողջական պահպանության վերաբերյալ ընդունված բանաձևի մեջ հստակ նշվում է, որ «Ճարտարապետական ժառանգությունը հանդիսանում է Եվրոպայի մշակութային ժառանգության բազմազանության և հարստության անփոխարինելի արտահայտությունը, անցյալի անգնահատելի վկայությունը և բոլոր եվրոպացիների ընդհանուր ժառանգությունը», ապա թվարկվում են կողմերի պարտավորությունները, որոնք խստորեն սահմանափակում են պահպանվող ճարտարապետական արժեքների նկատմամբ կիրառվող ձևափոխման նոր ծրագրերի և օբեկտների մշակումն ու ընդունումը խստիվ արգելելով շենքերի քանդումն ու նոր շենքերի կառուցումը: Այս ծայրահեղ մոտեցումը հակադրվում էր քաղաքաշինության պահանջներին: Հետագա փորձն ամբողջովին դուրս մղեց նշված բանաձևի դրույթները, ինչից հետո եվրոպական երկրները կիրառեցին միանգամայն այլ քաղաքականություն: Պատմական անցյալ ունեցող քաղաքներում նոր նախագծերի ներդրման անհրաժեշտության դեպքում հետևողականորեն ուսումնասիրվում է գոյություն ունեցող քաղաքաշինական առկա միջավայրը, ճարտարապետական ոճը, և նախագծվում է արդիական շենք՝ այն տեղադրելով ճարտարապետական ձևավորված միջավայրում, ստեղծելով կառուցապատման ներդաշնակ ամբողջություն:

Ակնհայտ է, որ Եվրոպայի և Միջին արևելքի որոշ երկրներում արդեն տասնամյակներ է, ինչ գտել են համապատասխան լուծումներ՝ հասնելով գոհացուցիչ արդյունքների: Նրանց փորձառության ուսումնասիրությունն անշուշտ Իրանի նման պատմամշակութային բազմադարյան անցյալով, պատմաճարտարապետական խոշոր նշանակություն ունեցող կոթողներով ու քաղաքներով հարուստ երկրների համար ուսանելի է:

Այդ կապակցությամբ բերված են Իտալիայի, Անգլիայի և Ֆրանսիայի օրինակները: Անգլիայում քաղաքների հին հյուսվածքի վերականգնման և արդիականացման աշխատանքներում կարևորվել են եկամտաբերությունն ու քաջալերող ազդակները, և առաջնահերթությունը տրվել է զբոսաշրջության զարգացմանը: Օրակարգում հատկապես մեծ տեղ է հատկացվել բնակիչների համագործակցության կարևոր գործոնին: Մանրակրկիտ ուսումնասիրվել է քաղաքային հին հյուսվածքի ընդհանուր և մասնակի կառույցների անցած պատմությունը: Հանրային, մասնավոր և ազգային հատուկ նշանակություն ունեցող կառույցների վրա սահմանվել է հսկողություն և այլն:

Իտալիայում քաղաքների բարեկարգման և վերակառուցման աշխատանքներն ընթացել են այլ կերպ, քանի որ պայմանավորված են եղել քաղաքական նախասիրություններով, պետական միջամտությունների առկայությամբ և ներազդեցությամբ: Միջամտությունները նպատակաուղղվել են հին քաղաքի հյուսվածքի պահպանմանը՝ այն դիտարկելով և գնահատելով որպես ազգային, հասարակական և մշակութային յուրահատուկ հարստություն: Իսկ բարեկարգման և բարենորոգման աշխատանքները ֆինանսավորվել են պետության կողմից: Մեծ նշանակություն է տրվել նաև նոր թաղամասերը հներին ներդաշնակորեն համադրելուն:

Պատմականորեն ձևավորված ճարտարապետական միջավայրում նորի ներմուծման հարցում տևականորեն իշխում էր իրավիճակին հարմարվելու, հնաձև նախագծերով ժառանգվածը պահպանելու միտումը:

Անցյալ դարի կեսերից փորձեր են արվել նորը կերտել անկախ, արդիական մոտեցումներով՝ այն դուրս բերելով ձևավորված միջավայրի սահմաններից դուրս: Ակնհայտ օրինակ է Փարիզի պատմական կենտրոնի գլխավոր մայրուղու՝ Ելիսեյան դաշտերի շարունակության վրա, XVI օկրուգից արևմուտք, քաղաքի մերձակայքում իրականացված Լա դը Ֆան բնակելի գանգվածը: Գրեթե միաժամանակ լայն տարածում գտավ մայրաքաղաքների և մեգապոլիսների շուրջը քաղաք-արբանյակներ կառուցելու գաղափարը: Փարիզի շուրջն իրականացված քաղաք-արբանյակները կազմեցին «մեծ պսակը»՝ ի հակադրություն քաղաքի տարածքի ընդարձակմամբ ստեղծված «փոքր պսակի»: Կատարվեցին պատմականորեն ձևավորված միջավայրի առավել ակտիվ միջամտության փորձեր (օրինակ՝ Փարիզում Լուվրի բակում կառուցված ապակե բուրգը, կամ հին՝ Պլատո Բոբուր շուկայի տեղում կառուցված Պոմպիդոյի անվան մշակութային կենտրոնի թափանցիկ շենքը): Վերջինների իրականացման շուրջ գնացին թեր և դեմ լայն քննարկումներ:

Առանձնահատուկ վերաբերմունք է պահանջում նոր ձևավորվող քաղաքաշինական միջավայրում պատմական հուշարձանի կամ հուշարձանախմբի ընդգրկման հարցը: Ուշագրավ է Վաղարշապատի քաղաքային

կենտրոնի բարեկարգման նախագծում «Շողակաթ» եկեղեցու նկատմամբ ցուցաբերված հարգալից մոտեցումը:

Հուշարձանների նկատմամբ մոտեցումները ժամանակի ընթացքում փոփոխություն են կրել: Սակայն Ֆրեդենցիայի և Վենետիկի կենտրոնների օրինակով գոյություն ունեն քաղաքներ, որոնք պահպանել են իրենց ուրույն դեմքը: Այնուհետև ներկայացվել է Ֆրանսիայում 20-րդ դարասկզբի քաղաքային վերաշինության և նորաշինության վեց հատկանշական ժամանակաշրջաններով գործընթացը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ իմաստն ու խորհուրդը և ներկայացնում էր տվյալ ժամանակաշրջանի էությունը:

Ակնարկելով Իրանում քաղաքաշինության զարգացման պատմական ընթացքին և 1950 թվից իրականացված քաղաքային բարենորոգման և բարեկարգման աշխատանքներին, բացահայտվել է, որ մակերեսային մոտեցումների արդյունքում քաղաքի տեսքը աղավաղվել է, հին հյուսվածքը բզկտվել և պատմական քաղաքն իր կենտրոնով ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում միանգամայն կերպարանափոխվել է կորցնելով իր մշակութային և գեղագիտական արժեքները, դիմագիծը, հասարակական նկարագիրն ու պատմական յուրահատկությունները: Կատարվել է Թեհրանի և արտասահմանյան բարգավաճ քաղաքների ճարտարապետական ժառանգության պահպանման և վերօգտագործման փորձի համառոտ համեմատական վերլուծություն նկատի առնելով այն կարևոր հանգամանքը, որ տարբեր երկրների ուսումնասիրված մոդելներից ոչ մեկը չի կարող ուղղակիորեն կիրառվել Իրանում, տվյալ պարագայում՝ Թեհրանում՝ ելնելով տեղական պայմաններից, հնարավորություններից և քաղաքական նպատակներից: Դրանք կարող են օգտագործվել որպես սկզբնակետ և ոչ ավելին: 1994 թվականից երկրի քաղաքաշինության ոլորտում ի հայտ եկած լուրջ տեղաշարժերի արդյունքում երկրի բարգավաճման պետական երկրորդ ծրագրում առաջադրվեցին քաղաքների մշակված հյուսվածքի, ինչպես նաև հին շենքերի ու թաղամասերի բարենորոգման ու վերականգնման խնդիրները և ներկայացվեց մշակված ծրագրի մի նոր տարբերակ, որի առանցքային կետերից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Գոյություն ունեցող արժեքավոր կառույցների պահպանում և վերականգնում,
2. Հին հյուսվածքի խարխուլ և անարժեք շենքերի քանդում,
3. Կարևոր գործառնություն շենքերի նախագծում:

Համառոտ ներկայացվել են նաև **իրանահայ այն ճարտատապետների** առումները, ովքեր որպես առաջատար էական ներդրում են ունեցել Իրանի արդի ճարտարապետության ձևավորման և զարգացման մեջ:

Երկրորդ գլխի եզրակացության մեջ նշված է, որ արտասահմանյան երկրների ճարտարապետական ժառանգության պահպանման և վերօգտագործման փորձի ուսումնասիրությունը կարող է ուսանելի լինել Թեհրանում կիրառվելու համար, սակայն չի նշանակում ընդունել դրանք որպես պատրաստի «ծրագրային փաթեթներ», որոնք կարող են ներգրվել Թեհրանի համատեքստում: Կարճաժամկետ հեռանկարում դրանք կարող են օգտագործվել՝ հաշվի առնելով այդ դաշտի կարգավորման անհետաձգելի անհրաժեշտությունը, սակայն երկարաժամկետ առումով Իրանի մշակութային ժառանգության

պահպանման օրենքները պետք է մշակվեն՝ հաշվի առնելով ժամանակի ընթացքում ձևավորված քաղաքաշինական միջավայրի նպատակահարմար և բարեկազմ օգտագործման արդյունավետության չափանիշները:

Երրորդ գլխում Թեհրանի հայ համայնքի ճարտարապետական ժառանգության արդի վիճակի համակողմանի ուսումնասիրությունում ներկայացված է հետազոտման, գույքագրման, չափագրությունների, տեսողական գնուման, արխիվային և փաստավավերագրական նյութերի արդյունքների հիման վրա կատարված. **ա)** շենքերի դասակարգում ըստ հոգևոր, ուսումնական, մարզամշակութային, հասարակական և վարչական և գործառական բնույթի, **բ)** շենքերի գնահատում և արժեքավորում ըստ պատմական շրջանի, ճարտարապետական մակարդակի, քաղաքաշինական դիրքի, գեղագիտական չափանիշների, պահպանվածության աստիճանի, արդիականացման հնարավորությունների ու զարգացման հեռանկարների և տեխնիկատնտեսական և նյութական կարևորության, **գ)** ուսումնասիրության ընդհանուր գնահատականների եզրափակում:


Պաշտոնական տվյալների հիման վրա ներկայացված է աղյուսակ, որտեղ բացահայտվել է, որ գործող 20 ուսումնական շենքից՝ (16 դպրոց և 4 մանկապարտեզ) 10-ը շինարարական կոնստրուկցիաների ամրության և երկրաշարժակայունության առումով գնահատվել են թույլ աստիճանի, որոնք ներկայումս չեն համապատասխանում երկրում ընդունված նորմատիվ պահանջներին և անհնար է բարձրացնել դրանց դիմադրողականությունը տարբեր աստիճանի մաշվածության պատճառով, 2-ը գնահատվել են միջակ, որոնց դիմադրողականության բարձրացումը հնարավոր է և ենթակա են ամրացման և 8-ը լավ և դիմակայուն, որոնք ենթակա են պարբերական ստուգման:

Տրված են ճարտարապետական ժառանգության նպատակահարմար և բարեկազմ օգտագործման, վերականգնման, զարգացման ու արդիականացման հեռանկարները համոզված լինելով, որ ժամանակը թելադրում է իր պահանջները, որոնց լուծման համար անհրաժեշտ է քննադատական և վերլուծական մտնեցումները: Գործարարապետությանը պետք է նոր ուղղություն տալ և գտնել համապատասխան հորինվածքային կապեր հնի և նորի միջև: Այդ նպատակով կատարվել է Թեհրանի հայ համայնքի ազգայական ճարտարապետական ժառանգության 55 շենքի դասակարգում: Գերեզմանատները դասակարգվել են առանձին, որպես ազգային նկարագրի և պատմավավերագրական նշանակության վայրեր: Բնակելի շենքերը դիտարկվել են իրենց շրջապատող միջավայրի բնակարանների օրինակների քաղաքաշինական ընդհանուր զարգացման հարթակում:

Թեհրանի հայ համայնքի կազմավորման և ճարտարապետական ժառանգության զարգացման ընթացքի ու արդի իրավիճակի ուսումնասիրությունը և ճարտարապետական ժառանգության պահպանման և վերաօգտագործման արտասահմանյան փորձի վերլուծությունը հանգեցրել են անհրաժեշտ գործնական եզրակացությունների:

Խնդիրը համալիր բնույթ է կրում, ուստի այս կարճ ուսումնասիրության մեջ, որն ունի տեսական և գործնական նշանակություն, այն ներկայացված է ընդհանուր տեսքով, որտեղ քննարկվել է ոչ միայն զարգացման որոշակի փուլի ճարտարապետություն, այլ դիտարկվել է տնականորեն ձևավորված ազգային բազմաբնույթ ժառանգությունը, որը ներառում է վերը նշված խնդիրները: Կատարվել է առկա նյութի բազմակողմանի վերլուծություն և համակարգում: Թեհրանի հայ համայնքի ճարտարապետական ժառանգությունը գնահատատելու համար ընդունված է նախօրոք մշակված 10 միավորային համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռել անկանխակալ գնահատական տալ շենքերին՝ դրանց նպատակային և լավագույն օգտագործման, վերականգնման, զարգացման ու արդիականացման հեռանկարներն ուրվագծելու համար:

Երրորդ գլխի եզրակացությունում, բացահայտվել և գրաֆիկորեն ներկայացվել են ժառանգության հինգ գործառույթներին պատկանող շենքերի դասակարգման ու գնահատման արդյունքները (Նկ. 7,8):



Նկ.7 - Գործարարապետական ժառանգության մարզամշակութային շենքերի գնահատում ըստ 10 միավորանոց համակարգի




Նկ.8-Գործարարապետական ժառանգության ուսումնական շենքերի գնահատում ըստ 10 միավորանոց համակարգի

Բացահայտվել և գրաֆիկորեն ներկայացվել են նաև ճարտարապետական ժառանգության հետագա զարգացման հնարավորությունների արդյունքները (Նկ.9,10):

Իսկ նյութական արժեքի տեսանկյունից առանձին կառույցի մոտավոր արժեքը կազմելիս նկատի է առնվել տարբեր քաղաքամասերում տվյալ հողամասի միջին գինը և բազմապատկվել շենքի ընդհանուր մակերեսով: Արդյունքում 2012թ. տվյալների հիման վրա, ազգայական ընդհանուր ճարտարապետական ժառանգության մոտավոր միջին մակերեսը (126500 քմ) բազմապատկվել է շենքերի օրվա միջին արժեքի գումարով և ստացվել (760.000.000 USD) արժողությամբ կալվածքի նյութական մոտավոր պատկեր, որը ենթակա է տարադրամի փոխարժեքի առօրյա հաճախակի տատանումներին:

Հողամասի արժեքի և շենքերի մաշվածության ու ամրության տվյալները




Նկ.9-Ճարտարապետական ժառանգության մարզամշակութային շենքերի օգտագործման հնարավորությունների տարբերակ

Նկ.10-Ճարտարապետական ժառանգության ուսումնական շենքերի օգտագործման հնարավորությունների տարբերակ

ներկայացվել են աղյուսակներով և գրաֆիկներով: Ընդհանուր գնահատականների արդյունքում ստույգ բացահայտվել են ազգապատկան ճարտարապետական ժառանգության այն շենքերի քանակը, որոնք ենթակա են պարբերական նորոգման, բարեկարգման, քանդման ու վերակառուցման և վաճառքի:

Նկատի առնելով համայնքի ճարտարապետական ժառանգության հետագա օգտագործման հնարավորությունների առնչությամբ նշված եզրակացությունները, առաջարկներն ու հանձնարարականները, ատենախոսության մեջ, որպես տարբերակ ներկայացվել է մի նախագիծ, կապված Հասանաբաղ թաղամասի Ս.Աստվածածին եկեղեցու տարածքի բարեկարգման, նորոգման և հայ հասարակության աշխուժացման խնդրի լուծման հետ (Նկ.11):



Նկ.11 – Ս. Աստվածածին եկեղեցու տարածքի բարեկարգման նախագիծ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես ուսումնասիրության արգասիք, ներկայացված են Թեհրանի հայկական ճարտարապետական ժառանգության պահպանման, օգտագործման, արդիականացման գիտականորեն հիմնավորված հետևյալ տեսական դրույթները, գործնական հանձնարարականներն ու առաջարկները:

1. Առանձնացվել են պատմաճարտարապետական, քաղաքաշինական, գործառական և այլ որոշակի արժեք ներկայացնող օբիեկտներ և արժեվորվել ու դասակարգվել ըստ այդմ:

2. Ուսումնասիրությունը բացահայտել է, որ Թեհրանում հայ ազգապատկան շենքերից ոչ մեկը Իրանի համար դեռևս որպես պատմական հուշարձան չի կարող համարվել: Այդուհանդերձ, տեղական արժեք ունեցող հոգևոր ժառանգության 10 եկեղեցուց՝ Ս.Թադեոս և Բարթողիմեոս, Ս.Գեորգ և Ս.Աստվածածինը պետականորեն գրանցվել են պատմական արժեքավոր կառույցների ցանկում, իսկ հաջորդ գրանցման համար ներկայացվել են նաև երկու եկեղեցի և երեք մատուռ:

3. Գնահատականներ են տրվել միայն այն շենքերին, որոնց նկատմամբ անհրաժեշտ է համարվել կիրառել հատուկ վերաբերմունք հաշվի առնելով մոտավոր հարաբերակցությամբ տեխնիկատնտեսական խոշորացված ցուցանիշները:

4. Հույժ կարևոր է համարվել համայնքի ճարտարապետական ժառանգությանը տալ իրապաշտական գնահատական, քանի որ ազգապատկան շենքերի օգտագործման կրճատման հիմնական դրդապատճառ հանդիսացող արտագաղթը և զրոգալացումը ու միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը երկրում առաջացրել են սոցիալ-տնտեսական նոր պայմաններ ու պահանջներ:

5. Անհրաժեշտ է համարվել, որ որոշ շենքերի ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները արդիականացվելով, համապատասխանեցնել նոր հարաբերությունների թելադրած պահանջներին: Հակառակ պարագայում դրանք դուրս կհանվեն համայնքային սպասարկման համակարգից՝ աստիճանաբար մատնվելով փլուզման, ինչը պատմական ու նյութական արժեքների կորստից գատ կվերացնի այդ ժառանգության արժեքավոր մասն ապագա սերնդին փոխանցելու հնարավորությունը:

6. Իրատեսական եզրակացությունների համար անհրաժեշտ է համարվել կազմել առավել ճշգրիտ պատկեր, ինչի իրականացումն ազգային առաջնորդարանից կպահանջի տեխնիկատնտեսական ցուցանիշների ճշտման համակարգված, մասնագիտական մանրագնին, լրացուցիչ ծավալուն աշխատանք՝ ճարտարապետական ժառանգության զարգացման, վերականգնման և օգտագործման հնարավորությունների լավագույն ձևակերպման՝ համայնքային շահերից բխող ծրագիր կազմելու համար:

Չհավակնելով այս կապակցությամբ վերջնական որոշման կայացման՝ այնուամենայնիվ սույն ուսումնասիրությունը մեզ տվել է ընդհանուր պատկեր և որոշակի իրավիճակ մատնանշելու միտում, որը հույսով համապատասխան պատասխանատու մարմինների համար գործնական լուրջ որոշումներ կայացնելու հիմք կհանդիսանա:

Առաջարկվել են խնդիրների լուծման հետևյալ հանձնարարականները

1. Երկրում ընդունված սեյսմիկ նորմերի պահանջների շրջանակում, մասնագիտական ուսումնասիրություններ անցկացնել Թեհրանի տարածքում

գոյություն ունեցող ազգապատկան բոլոր այն շենքերի և կալվածքների համար, որոնց պահպանելը համարվում է անհրաժեշտ:

2. Ազգային իշխանությունը, հետևողական աշխատանքով, համապատասխան պետական մարմիններին իրազեկ պահի 2012թ. մարտ ամսին վավերացված Թեհրանի գլխավոր նոր հատակագծում հայկական ճարտարապետական ժառանգության ներառման և տեղաբախման նշանակության մասին:

3. Կազմել միջամտության արժանի յուրաքանչյուր առանձին կառույցի մանրագին գույքագրում և կատարվելիք աշխատանքների նախահաշիվ:

4. Համագործակցելով քաղաքային կազմակերպությունների հատկապես Թեհրանի քաղաքապետարանի հետ, անհրաժեշտ է նպաստել բոլոր արժեք ներկայացնող ազգապատկան շենքերի պետական հաշվառմանը, ինչը մինչ օրս քաղաքապետարանի կողմից կատարվել է միայն հոգևոր կառույցների համար:

5. Քաղաքային զարգացման ծրագրերի շրջանակում սեփականության վաճառքը անխոհեմ քայլ համարվելու պարագայում, մշակելով եկամտաբեր ծրագրեր քանդման, չշահագործվող և վերանորոգման կամ բարենորոգման ելթակա կամ ամրացման ոչ ելթակա շենքերի տեղում, նախատեսել տեղանքի և ժամանակի պահանջներին համապատասխան նոր գործառույթներին ծառայող առևտրական, սպասարկման, հասարակական և այլ նպատակահարմար բնույթի աշխատավայրեր:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումների ցանկ

1. Թարվիրոյան Ա.Ա. Թեհրանի հայ համայնքի ճարտարապետական ժառանգության պահպանման և բարեկարգման անհրաժեշտությունը //ԵՃՇՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածու.-Երևան, 2010.-Հատոր III(39).-Էջ 166-172:
2. Թարվիրոյան Ա.Ա. Հին Թեհրանի հայկական համայնքի կազմավորումն ու հայկական ճարտարապետության ժառանգության պահպանման անհրաժեշտությունը ներկա ժամանակաշրջանում //ԵՃՇՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածու.-Երևան, 2010.-Հատոր III(39).-Էջ 173-178:
3. Թարվիրոյան Ա.Ա. Թեհրանի հայկական ճարտարապետության ժառանգության քաղաքային պայմանների քննարկում //ԵՃՇՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածու.-Երևան, 2011.-Հատոր IV(43).-Էջ 47-53:
4. Թարվիրոյան Ա.Ա. Քաղաքների վերականգնման և վերանորոգման միջազգային փորձի ուսումնասիրումն ու ներդրման հնարավորությունը Թեհրանում //ԵՃՇՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածու.-Երևան, 2012.-Հատոր II (45).-Էջ 41-49:
5. Թարվիրոյան Ա.Ա. Թեհրանի պատմական հյուսվածքի կազմավորումն ու զարգացումը՝ որպես հայ համայնքի ճարտարապետական ժառանգության ձևավորման և տեղաբաշխման նախադրյալ //ԵՃՇՊՀ-ի Տեղեկագիր.-Երևան,- 2012.-Հատոր III (29).-Էջ 53-59:
6. Թարվիրոյան Ա.Ա. ճարտարապետական «մոդեռն» շարժումը և իրանահայ առաջատար ճարտարապետների ճարտարապետական ժառանգությունը Թեհրանում //ՀՇՄ-ի Տեղեկագիր.-Երևան,- No 11-12/2012(183-184).Էջ 48-55:

ОЦЕНКА И ВОЗМОЖНОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ ТЕГЕРАНА

Диссертация посвящена исследованию и выявлению путей развития и оценки архитектурного наследия армянской диаспоры Тегерана, в том числе: сохранению, видоизменению, реконструкции, преобразованию.

Рассматривается сущность происходящих в архитектуре процессов, выявляются концептуальные основы отдельных семи районов города, где сохранено наследие армянской диаспоры, определяется их место в едином русле развития архитектуры Тегерана и их дальнейшая судьба.

Это первое исследование, посвященное данной проблеме.

Результаты исследования имеют научно-практическое значение и могут быть использованы Советом армянской диаспоры Тегерана для разработки перспективных программ дальнейшего использования, развития и видоизменения в сложившихся условиях.

Они могут служить также источником для заинтересованных организаций и исследователей истории армянской диаспоры Тегерана, а также основой и прерогативой для последующих исследователей по архитектурному наследию армянской диаспоры других городов.

Работа состоит из текстовой и иллюстративной частей.

Текстовая часть включает: введение, три главы, выводы и рекомендации, список использованной литературы.

Иллюстративная часть включает чертежи, таблицы, графики, карты, схемы и фотографии с натуры.

Во введении определены актуальность темы, цель, задачи, границы, методика, научная новизна исследования и результаты практического внедрения.

В первой главе представлен краткий исторический очерк формирования и развития наследия армянской диаспоры Тегерана (XVIII – XXI вв.), приведено современное состояние сложившегося архитектурного наследия, которое основывается на базе многовековых традиций армянского зодчества.

Воспринимая эти традиции, в первую очередь, как накопление и творческое использование богатого опыта предшественников, определяются новые требования и условия месторасположения этих построек, продиктованные современными сложившимися условиями.

С XVIII до XXI вв. в семи армянских районах города Тегерана, сохранились как культовые постройки (которые находятся под патронажем государства), так и общественные, административные, учебные, спортивно-оздоровительные и культурные сооружения.

В формировании планировочной структуры культовых сооружений, в основном, используются принципы купольно-базиличного типа, при котором раскрываются внутренние пространства, поддерживаемые архитектурными формами здания, как в целом, так и в отдельных его деталях.

Иногда, это достигается благодаря расширению центрального нефа и подчеркнутому вертикальному подкупольному пространству интерьера.

Сохранившиеся гражданские здания в семи районах армянской диаспоры свидетельствуют как об опыте многовековых традиций, так и об использовании

богатого опыта в раскрытии творческих возможностей архитектурного наследия той страны, где они находятся, в частности, в Иране.

Во второй главе кратко изложены особенности и принципы зарубежного опыта сохранения и использования исторического наследия в некоторых странах.

При этом выдвигались различные концепции преобразования, адаптации, модернизации и сохранения в неизменном виде отдельных памятников и исторической среды как в Европе, так и на Ближнем Востоке на протяжении целых десятилетий.

Использование этого опыта, как и сложившиеся условия дают возможность выбрать решения применительно к армянскому архитектурному наследию и перспективы его дальнейшего развития, в новых условиях и формирования образа мышления, соответствующего этим условиям.

В результате выявления серьезных перемен в области политики градостроительства страны с 1994 г. для города Тегерана муниципалитетом, была разработана новая программа, где главными направлениями являются:

1. Сохранение и восстановление строений, имеющих историческое значение.
2. Снесение старых, разрушенных строений.
3. Проектирование и строительство новых зданий и сооружений на этих территориях, имеющих важнейшее значение для градостроительства.

В третьей главе проведена классификация и систематизация построек армянской диаспоры по их архитектурной, градостроительной, функциональной, экономической значимости, а также разработана балльная система оценки этих сооружений с учетом перспективы на будущее.

На основе разработанной методики - балльной оценки определены перспективы рационально-оптимального использования, восстановления, развития и модернизации этих построек.

Поставленная задача носит комплексный характер и имеет как теоретическое, так и практическое значение.

Она непосредственно связана с историческим наследием наряду с выработкой ряда четких композиционных решений армянского зодчества.

Естественно, что в зависимости от уровня развития нации и "генетического фонда", процесс выживания происходит по-разному.

Ведь история располагает примерами, когда народы, создавшие в прошлом великие цивилизации и художественные ценности, сегодня, не выделяясь своеобразием, входят в общее русло культурного развития, так как условия жизни, ее требования оказываются сильнее.

Не объясняется ли это страхом потери национального своеобразия, которое имеет особое историческое значение для малочисленных народов?

Архитектурное наследие армянской диаспоры, подобно письменности, было не только средством сугубо культурного самовыражения, но и утверждения, самовыживания и развития нации.

В заключении представлены научно обоснованные рекомендации и предложения по сохранению, развитию модернизации и дальнейшему использованию архитектурного наследия армянской диаспоры Тегерана.

THE EVALUATION AND POTENTIAL USE OF THE ARCHITECTURAL HERITAGE OF THE ARMENIAN COMMUNITY IN TEHRAN

ABSTRACT

The treatise is devoted to research and identify ways of development and evaluation of the Armenians' architectural heritage of Tehran, including: conservation, alteration, reconstruction, conversion.

The essence of the architecture processes, identifies the conceptual foundations of the seven districts of the city, where the heritage of the community, is determined by their place in the mainstream of architecture of Tehran.

This is the first comprehensive study of its kind on this issue since the city was elected as capital in early eighteenth century, where the buildings of various usage such as religious, educational, sports, business, etc. are included.

Results of the study are scientific and practical value and can be used by the Armenian Diocese of Tehran for the development of promising programmes to further the use, development and modification of the architectural heritage.

The research results can be the same source for interested organizations and researchers of the history of the Armenian community in Tehran.

They can serve as a basis and the prerogative for subsequent researchers on architectural heritage of the Armenian diaspora in other cities.

The work consists of textual and illustrative pieces. The text portion includes: introduction, three chapters, conclusions and recommendations, bibliography.

The illustrated part consists of drawings, tables, graphs, maps, diagrams, and photographs from nature.

In the Preface: the relevance of the topic, purpose, objectives, limits, methodology, scientific novelty of the research and implementation of results.

The first chapter provides a brief historical review of the formation and development of the architectural heritage of Armenian community in Tehran (XVIII-XXI centuries).

State-of-the-art situation of the architectural heritage, which is based on centuries-old traditions of Armenian architecture, is explained in seven Armenian districts of Tehran and are preserved as a cult building (which are under the supervision of the State), social, administrative, educational, sports and cultural facilities.

General scheme of worship is used primarily on the principle of basilic shape and central dome type where disclosed internal space, supported by architectural forms a building as a whole and in its separate details.

Nowadays the challenge between contemporary architecture and historic urban landscape is one of the controversial issues in cities with historic background and it is doubtfully possible to reach equilibrium on this subject.

It shouldn't be forgotten that modern human has his own needs and demands and as everyone know a city is like a living creature that needs to continue and survive. So it is not wise to completely eliminate renovation in historic areas of the city, because we shouldn't obstruct the contemporary innovations and it's deserved to respect the "new" which is continue of the "old", and by itself shows evolutionary process. So, just having conservative viewpoint to historical fabrics can end up destruction and even death of that. This essay is seeking how the contemporary activities can be provided in historic context and how "current life" can be present in historic urban landscape without detriment.

In response to this, the experiences in Tehran historic city and different interventions in it have been considered.

In the second chapter the international practice, as well as Iranian practice in the usage and preservation and up keep of the architectural heritage is explained based on the studies done.

Since the awareness and familiarity with Old Tehran's history is important due to the fact that a valuable part of Armenian architectural heritage preserved to this day are located in the boundary of this city and specifically in its dilapidated fabrics.

In addition, many of Tehran's outstanding buildings which have historical and architectural values and old fabrics are owned by Iran's Armenian architects.

The renovation and urban renewal of these areas are at the top of the agenda of Tehran's Municipality presently.

In this research the political situation, historical circumstances, natural and climatic conditions have been described in the urban context, in which Tehran was formed and selected as the thirty-second capital of Iran in the late eighteenth century.

This is briefly mentioned to review the various stages of development of Tehran during the reign of different years until the end of the 1979.

At that time, due to the neglect of planning principles, uncontrolled urbanization development, expansion of the city and population increase, the identity and historical tissue in old part of the city was damaged.

It is obvious that in some of the countries located in Europe and the Middle East, found the appropriate solution to the problem and thereby achieved positive results.

Study of the experiences of these countries would be informative to protect the architectural heritage and the renovation of the Armenian community of Tehran.

As a result of the detection of serious change in policies of urban development in 1994, the city of Tehran was developed for the second new program where the main areas are:

1. Conservation and restoration of valuable and historical existing buildings.
2. Demolition of the worn and the worthless buildings.
3. Design and construction of new buildings with a crucial importance.

In this short research referred also to the name of Armenian architects. The first generation of modern Iranian architects, almost like every generation of modern architects in the world, appears as being influenced by the Modern Movement and rationalism in architecture. Iranian-Armenians architects are examples of this movement.

They were proponents of purely European architecture process and have had influential figure in the development of modern architecture in Persia, linking Persian architects with Europe's pioneers of the modern movement.

The third chapter represents the current state of architectural heritage of the Armenian community in Tehran which is based on the current research, visual inspection, and inventory and measurement results.

Based on the results, these buildings are classified and evaluated according to the architectural and urban values, as well as functional, historical, aesthetical, economic and financial importance and also the degree of preservation and reviewed perspective of the rational and optimal usage, restoration, modernization and efficient development.

The architectural heritage of the Armenian community like writing, it means not only cultural, but also allegations, survival and development of the nation.

In the conclusion presented to science-based recommendations and proposals for the conservation, development, modernization and further use of the architectural heritage of the Armenian community of Tehran.



